«Վարդանանք» կրթահամալիր ՍՊԸ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին»

Դասընթացավար՝ Ա.Արամյան

Ուսուցչուհի Մանե Միերի Ղազարյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն ----------

Խոսք ուսուցչին----------

Գործնական աշխատանքներն 1 դասարանում----------

Գործնական աշխատանքները 2-4 դասարաններում----------

Հետազոտական աշխատանքների դասակարգումը----------

Ինչ է նախագծի մեթոդը----------

Նախագծի մեթոդի առավելությունները----------

Ինչպես մշակել նախագիծը----------

Նախագծի նպատակները----------

Նախագծի խնդիրները----------

Գիտական վարկածը----------

Աշխատանքի պլանավորումը----------

Եզրակացություն----------

Գրականություն----------

Ներածություն

Ձեռնարկում ներկայացված են գործնական աշխատանքներ,որոնք կօգնեն ուսուցչին ընդլայնելու դասագրքի սահմանները,խորացնելու կրտսեր դպրոցականների գիտելիքները,զարգացնելու նրանց ճանաչողական ակտիվությունը:Պատկերավոր լեզվով ասած՝ մեզ շրջապատող աշխարհը ստեղծագործական լաբորատորիա է,որտեղ ընթանում է ճանաչողության գործընթացը:Աշակերտների գործնական աշխատանքը մայրենիից մի ոլորտ է,որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը,տեսությունն ու պրակտիկան:

Ձեռնարկի նպատակն է օգնել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝ կազմակերպելու աշակերտների ուսումնահետազոտական գործունեությունը,սովորեցնելու նրանց մտածել:

Ձեռնարկում ընդգրկված են մեթոդական երաշխավորություններ ՝ տարրական դասարանների «Մայրենի»առարկայից գնահատման համակարգի բաղադրիչներից մեկի՝ գործնական աշխատանքների բովանդակության ,գործադրման մեթոդների վերաբերյալ,ինչպես նաև տրված են մեկնաբանություններ՝ աշակերտների գործնական ,հետազոտական ,նախագծային աշխատանքների տեսակների ընդհանրությունների և առանձնահատկությունների վերաբերյալ:

Տարրական դասարաններում «Մայրենի» առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների

բովանդակությունն ու մեթոդները

(մեթոդական ցուցումներ)

Մարդուն անընդհատ սովորեցնելով յուրացնել պատրաստի գիտելիքներ ՝հնարավոր է բթացնել նրա ստեղծագործական ընդունակությունները,մոռացնել տալ մտածել:

Դիստերվեգ

«Հանրակրթության դերը մեծ մասամբ պայմանավորված է նրա գործնական – կիրառական նշանակությամբ:Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից է աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու

կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

ԳՈՐԾՆԱԿԱՆ անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները,որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների,կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

.ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,

.մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,

.նպաստել անհատի ինքնադրսևորմանը ,կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը»:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը,դրանց իմաստավորումը,ամրապնդումը,կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը,գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը:Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է ,ասայսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը,մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության,մտածողության,ստեղծագործական երևակայության դրսևորման ձև,որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ,կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝ մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ .

.պատմության գծապատկերի կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով,

.բառերի,վանկերի կազմության գծապատկերներ,

.տեքստի սխալների ուղղում,խառնված հերթականության շտկում,

.գործնական գրություններ՝ նամակ,հասցե,հայտարարություն,

.տեքստի նկարագարդում,

.գովազդային վահանակ,դասարանական թերթ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ,

.հեքիաթների հորինում,

.զանազան տեղեկատվական աղբյուրներից (բառարաններ,մանկական հանրագիտարաններ,ուսումնական ձեռնարկներ) որոնել,գտնել տեղեկություեւններ առաջադրվածա հարցերին պատասխանելու համար:

Գործնական աշխատանքներն 1 դասարանում

Դպրոցական ուսումնառության հենց առաջին օրերից սկսած՝ կարևոր է,որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը:Որպես կանոն՝ ուսման նկատմամբ անտարբեր երեխաները սովորում են շատ ավելի վատ,քան կարեն,և,հակառակը,հետաքրքրասեր,հարցասեր երեխաները սովորում են շատ ավելի հեշտ և արագորեն են յուրացնում գիտելիքները:

Սա է պատճառը,որ երեխային գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը, նրան համապատասխան կարողություններ և հմտություններ ուսուցանելը առաջին դասարանում դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրն է:ՈՒսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը՝ որպես ճանաչողական հետաքրքրության զարգացման և ուսումնական գործունեության նկատմամբ դրդապատճառների ստեղծման միջոց:

Գործնական աշխատանքներն 1-ին դասարանում կրում է ուսուցանող բնույթ:Այս ածխատանքը հիմնականում նպատակաուղղված է երևակայության ,ստեղծագործական մտածողության ,դիտարկման,հարցեր տալու կարողությունների զարգացմանը,որն էլ իր հերթին նպաստում է գործնական կարողությունների զարգացմանը:Հնարավոր չէ ձևավորել գործնական կարողություններ առանց երեխաների երևակայության և ստեղծագործական մտածողության զարգացման,որովհետև երևակայությունը կերպարի կամ գաղափարի ձևով նորի ստեղծման հոգեկան գործընթաց է: Հատկապես այդ գործընթացն է մարդուն դուրս բերում իրականության սահմաններից և հնարավորություն է ընձեռնում կողնորոշվելու տարբեր իրավիճակներում՝ կանխատեսելու արդյունքները:

Ներկայացնենք որոշ վարժություններ ,որոնք նպաստում են երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Վարրժությունների մի խումբ նպաստում է սեփական կարծիքը փոխելու ,իրերն ու երևույթները տարբեր տեսանկյուններից դիտարկելու կարողությունների զարգացմանը,ինչն էլ իր հերթին ,գործնական աշխատանքն արդյունավետ կատարելու հնարավորություն է ընձեռնում:Կարելի է հանձնարարել հետևյալ առաջադրանքներով վարժությունները.

.շարունակի՛ր անավարտ պատմվածքը,հեքիաթը,

.հորինի՛ր պատմվածք որևէ հերոսի անունից (պատկերացրե՛ք ,որ դուք որոշ ժամանակով դարձել եք այն ծառը,որի փչակում ձագեր է ունեցել «Չարի վերջը»բալլադի կկուն),

.որևէ առարկայի համար անվանի՛ր որքան հնարավոր է շատ հատկանիշներ,

.եկե՛ք միասին մտածենք, թե ինչու ամռանը սարերի վրայի ձյունը չի հալվում,

Կատարելով ենթադրություններ ՝ երեխաները պետք է սովորաբար իրենց խոսքում կիրառեն հետևյալ բառերը (ենթադրենք,ասենք թե,հնարավոր է,կարող է լինել) և այլն:Կարևոր կարողություն է նաև հարցեր առաջ քաշելու կարողությունը:Չե՞ որ յուրաքանչյուր ճանաչողական գործընթաց սկսվում է հարցադրումներից:Այդ նպատակով տրվում են մարդկանց,կենդանիների պատկերներով նկարներ,և երեխաներին առաջարկվում է պատասխանել տրված հարցերին :

Գործնական առաջադրանքներն իրենց մեջ ներառում են ճանաչողական գործընթացներ՝սկսելով ընկալման,մտապահման ,իմաստավորման գործողություններից և ավարտելով տրամաբանական ու ստեղծագործական գործընթացներով:

Առաջին դասարանից սովորողներին անհրաժեշտ է վարժեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին՝

.մտածել ինքնուրույն,

.հարցնել մեկ ուրիշից,

.կարդալ գրքերում,

.դիտել հեռուստացույց,

.տեղեկություն ստանալ համացանցից,

.դիտարկումներ կատարել,

.փորձեր անցկացնել,

.հարցնել համապատասխան մասնագետներից:

Գործնական աշխատանքները 2-4 դասարաններում

2 դասարաններից սկսած՝ արդեն կարելի է առաջադրել գործնական վարժություններ,որոնք կառուցված կլինեն մի շարք գործնական վարժություններից:Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք,որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում,որտեղ անհրաժեշտ է հնարամտություն,ստեղծագործական մոտեցում,որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը:

Գործնական աշխատանքը ենթադրում է նախաձեռնություն ցուցաբերելլու ցանկություն,կարողություն և հնարամտություն,ոչ ստանդարտ մտածողություն, ինքնուրույն որոշում կայացնելու:

2-4 դասարաններում գործնական աշխատանքները նպաստում են ոչ միայն յուրացված գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը ,այլև դպրոցականների այնպիսի մտածողական գործընթացների զարգացմանը ,ինչպիսիք են՝

.դասակարգումը,

.ամփոփումը,

.տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,

.իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը,

.միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը,

.տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,

.ինքնաստուգումը և այլն:

Գործնական աշխատանքների արդյունավետ իրականացումը կախված է մտածողության այս գործընթացների ճշգրիտ կազմակերպումից:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1.Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:

2.Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց՝ մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:

3.Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները:

4.Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:

5.Գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:

6.Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:

7.Գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնեն:

8.Գործնական ածխատանքը պետք է ապահովի սովորողների ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը:

9.Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը:

Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները մեծ հաշվով կարելի է անվանել ստեղծագործական-հետազոտական աշխատանքներ:

Հետազոտական աշխատանքների նկատմամբ պահանջմունքը պայմանավորված է երեխայի բնույթով:Երեխան ի ծնե հետազոտող է:Մանկական վարքի կարևոր հատկանիշներ են դիտարկվում հետաքրքրասիրությունը,դիտարկելու,փորձելու անդադար ձգտումը,շրջապատող աշխարհի մասին նոր տեղեկությունների որոնումը:

Հետազոտական գործունեության ընթացքում երեխան սովորում է դիտարկել,խորհել,համեմատել,պատասխանել հարցերին ,կատարել եզրահանգումներ,վերականգնել պատճառահետևանքային կապը և այլ:

Հետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում երեխաները պետք է կիրառեն տարբեր մեթոդներ ու հնարներ ,ճիշտ համակցեն դրանք միմյանց հետ:

Հետազոտական գործունեության արդյունքը ոչ միայն այն գիտելիքներն են,որոնք նա ձեռք է բերում,այլև ճանաչողական գործունեություն ծավալելու միջոցները,որոնք նպաստում են անձի մտավոր զարգացմանը:

Տարրական դասարաններում համարյա բոլոր հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ .թեմատիկան որոշում է ուսուցիչը ,բայց յուրաքանչյուր աշակերտ իր ավանդն է ներդնում ընդհանուր գործի մեջ:Այն սովորեցնում է երեխաներին աշխատել կոլեկտիվում ,ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել սեփականից:

Արդեն 4 դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտության թեման :Ուսուցիչը պետք է միայն ուղղորդի նրանց ճիշտ ընտրության հարցում՝ առաջարկելով մտածել հետևյալ հարցերի պատասխանների շուրջ.

.Ի՞նչն է ինձ հետաքրքրում ամենից շատ:

.Ինչո՞վ եմ ես ուզում զբաղվել առաջին հերթին:

.Ինչո՞վ եմ ես զբաղվում ազատ ժամերին:

.Ինչի՞ մասին կուզենայի իմանալ որքան հնարավոր է ավելին:

Ինչո՞վ կարող եմ ես հպարտանալ և այլն:

Պարզելով այս հարցերի պատասխանները՝ երեխան կարող է ստանալ ուսուցչի խորհուրդը հետազոտական աշխատանքի թեմայի ընտրության վերաբերյալ:

Թեման կարող է լինել.

.երևակայական (երեխան կարող է առաջ քաշել երևակայական վարկած),

.փերձարարական ,

.հայտնագործական,

.տեսական:

Հետազոտության կազմակերպումն ընդգրկում է հետևյալ փուլերը.

Ինքնուրույն մտածել.

.Ի՞նչ գիտեմ ես այդ մասին:

.Ի՞նչ մտքեր կարող եմ արտահայտել այդ մասին:

.Ի՞նչ եզրահանգումներ կարող եմ կատարել ինձ հայտնի տեղեկություններից:

Թեմայի վերաբերյալ կարդալ գրքեր,թերթեր և ամսագրեր

Գրել այն կարևոր տեղեկությունը ,որի մասին տեղեկացար գրքերից,թերթերից կամ ամսագրերից:

Հարցնել մեկ ուրիշից:

Գրել այն կարևոր տեղեկությունը,որը ստացար ուրիշից:

Դիտել հեռուստանյութեր

Գրել այն ամենը ,ինչի մասին տեղեկացար հեռուստացույցից:

Օգտագործել համացանց

Գրել այն ամենը, ինչի մասին տեղեկացար համացանցից:

Դիտարկել

Գրել այն հետաքրքիր,զարմանալի տեղեկությունը ,որը ստացար դիտարկումների շնորհիվ:Հնարավորության դեպքում կատարել նկարահանումներ:

Գրառել փորձերի արդյունքները:

Հետազոտական աշխատանքները դասակարգվում են՝

.ըստ աշակերտների քանակի՝ անհատական,զույգով,խմբային,

.Ըստ անցկացման վայրի՝ դասարանական և արտադասարանական,

.ըստ ժամանակի ՝ երկարատև,կարճատև,

.ըստ թեմայի ՝ առարկայական և ազատ

.ըստ խնդրի ՝ դասաի ընթացքում ուսումնասիրված ծրագրային նյութի յուրացման խորացում և հարցեր,որոնք ծրագարային նյութ չեն:

Վերջին ժամանակներս կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության և հետազոտական կարողությունների ձևավորման ու զարգացման նպատակով հաճախակի կիրառվում է նախագծերի մեթոդը կամ նախագծային աշխատանքը:

Նախագծային աշխատանքի էությունն այն է,որ երեխաները,իրենց հետաքրքրությունից ելնելով ,ուսուցչի հետ միասին իրականացնում են նախագիծ `լուծելով որևէ հետազոտական խնդիր:

Նախագծային և հետազոտական գործունեությունները սկզբունքորեն տարբեր են իրենց ուղղություններով,բնույթով և գործունեության տեսակների բովանդակությամբ:

Հետազոտությունը ճշմարտության որոնումն է,իսկ նախագիծը՝ կոնկրետ որևէ պարզորոշ խնդրի լուծումը:

Նախագծի կամ հետազոտության խնդիրները պետք է համապատասխանեն տարիքին և գտնվեն սովորողների մերձակա զարգացման գոտում,քանի որ հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ և մատչելիությունը որոշում են աշխատանքի հաջողությունը:

Նախագծային գործունեությունը նպաստում է հետազոտական կուլտուրայի ձևավորմանը:Հաշվի առնելով տարրական դասարանների տարբեր առարկաների ծրագրային առանձնահատկությունները ,այն հանգամանքը,որ նախագծային և հետազոտական գործունեությունները ,բացի տարբերություններից,ունեն նաև շատ ընդհանրություններ,ինչպես նաև կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները ` տարրական դասարաններում նպատակահարմար է նախագծային և հետազոտական գործունեությունը միավորել և անցկացնել նախագծային – հետազոտական գործունեություն:

Նախագծային – հետազոտական գործունեությունը սեփական հետազոտության նախագծման գործունեությունն է,որը ենթադրում է նպատակների և խնդիրների առկայություն,համապատասխան մեթոդների ընտրության սկզբունքներ,հետազոտության ընթացքի պլանավորում ,հետազոտության իրականացման գնահատում,հետազոտության արդյունքների ներկայացում:

Կրտսեր դպրոցում նախագծային – հետազոտական գործունեության կառուցվածքը ,առանձնահատկությունները

1.Նախագծի մեթոդի կիրառման անհրաժեշտությունն արդի ժամանակաշրջանում

Նոր դարաշրջանը,նոր հազարամյակը կրթական համակարգի առջև դնում են բարձր և նշանակալի նպատակներ:Կրթական հաստատությունների նպատակն է սովորողներին մատուցել ոչ միայն շատ գլտելիքներ,այլև սովորեցնել ինքնուրույն ձեռք բերել դրանք,օգնել կայանալու կյանքում:

Կյանքի տարբեր ոլորտների գաղտնիքները բացահայտելու ցանկությունը ծնվում է դպրոցական տարիներին:Դեռևս տարրական դասարաններում կարելի է հանդիպել աշակերտների ,որոնց չեն բավարարում դասագրքում զետեղված առաջադրանքները:Նրանք կարդում են բառարաններ և հատուկ գրականություն,փնտրում են իրենց հարցերի պատասխանը համացանցի տարբեր կայքերում:Այդ իսկ պատճառով կարևոր է հենց դպրոցում բացահայտել այն աշակերտներին ,որոնց հետաքրքրությունների շրջանակը դուրս է դպրոցական ծրագրերից ,որոնք հետաքրքրվում են շրջապատում տեղի ունեցող երևույթներով:

Այսպիսի մեթոդների մեջ առաջատար դերը պատկանում է նախագծերի մեթոդին:

Այս մեթոդի հիմքում ընկած է սովորողների տրամաբանական-ճանաչողական ,նոր գիտելիքների ինքնուրույն յուրացման ,կողմնորոշվելու ,խնդիրները տեսնելու:

Նախագծային գործունեությունը որոշակի քայլերի շարք է,որը սկսվում է մարդու առջև դրված իրական խնդրի առաջքաշումով և վերջանում որոշակի արդյունքի ստացումով,ընդ որում՝ այն արդյունքի,որը նախապես պլանավորված է նախագծային գործունեությունն իրականացնելու սկզբում:Յուրաքանչյուր նախագիծ կարող է ծառայել որպես մտածողության զարգացման արդյունավետ գործիք:Սա է պատճառը,որ նախագծային գործունեությունը դարձել է ուսուցման գործընթացի անխախտ մասը,կրթական կարևորագույն տեխնոլոգիաներից մեկը:

2.Ինչ է նախագծի մեթոդը

Նախագծի մեթոդը նորույթ չէ համաշխարհային մանկավարժության մեջ:Այն ներկայացրել և մշակել է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ.Դյուին անցած դարի 20-ական թվականներին:Մեթոդը մշակված է փիլիսոփայության և կրթության հումանիստական գաղափարների հիմքով:Այս մեթոդը հիմնված է սովորողների ինքնուրույն գործունեության վրա,երբ աշակերտը որոշակի ժամանակաընթացքում կատարում է որևէ աշխատանք:

Նախագծի մեթոդի կիրառման ընթացքում լուծվում են հետևյալ կարողությունների զարգացման խնդիրները.

.սովորողների ճանաչողական,

.տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու կարողությունների,

.իր գիտելիքներն ինքնուրույն կիրառելու

.գիտության տարբեր բնագավառներից գիտելիքների,

Նախագծերի մեթոդը միտված է սովորողների ինքնուրույն գործունեությանը(անհատական ,զույգային,խմբային) ,որը նրանք իրականացնում են նախատեսված որոշակի ժամանակամիջոցում (մի քանի րոպեից սկսած մինչև մի քանի օր,երբեմն էլ մեկ ամիս):

Բացի դրանից՝ նախագծի մեթոդը ենթադրում է.

.խնդիրների առկայություն,որոնք պահանջում են ինտեգրված գիտելիքներ և դրանց լուծման համար հետազոտական ուղիներ,

.ակնկալվող արդյունքների գործնական ,տեսական ,ճանաչողական արժեք,

.հետազոտական մեթոդների կիրառում,վերջնական արդյունքների ձևավորում,ստացված տվյալների վերլուծություն ,շտկում,եզրահանգումների կատարում:

Նախագծային մեթոդի կիրառումը ենթադրում է լավ մտածված ուսուցման մեթոդների,ձևերի,հնարների,միջոցների հիմնավորված համակցում:

Նախագծերի մեթոդը հնարավորություն է ընձեռում լուծելու մի շարք կարևոր խնդիրներ.

.Պարապունքները չեն սահմանափակվում միայն որոշակի գիտելիքների և կարողությունների ձեռքբերմամբ ,այլ դրանք կիրառվում են գործնականում:

.Մեծանում է սովորողների անհատական և կոլեկտիվ պատասխանատվությունը կոնկրետ աշխատանքի նկատմամբ:

.Միասնական աշխատանքը սովորեցնում է աշխատանքը կատարել մինչև վերջ,և սովորողները տեսնում են իրենց աշխատանքի արդյունքը:

.Նախագծային աշխատանքի ընթացքում կիրառվում են ուսումնական գործունեության տարբեր ձևեր,որոնց ընթացքում իրականացվում է համագործակցություն աշակերտների միջև,աշակերտների և ուսուցչի միջև:

.Ամբողջ գործընթացում հաշվի են առնվում աշակերտի հետաքրքրությունները,կեսափորձը և անհատական ունակությունները:

Նախագծի մեթոդի առավելություններն են.

.զարգացնում է սովորողի ինտելեկտը,նրա պլանավորման և գործողությունների հաջորդական կատարմանը հետևելու, գիտելիքների յուրացման և դրանք գործնականում կիրառելու կարողությունները,

.զարգացնում է ստեղծագործական կարողությունները,

.ենթադրում է սովորողների ինքնուրույն գործունեություն՝վերլուծություն,համադրություն,կանխորոշում և այլն,

.ենթադրում է հետազոտական,որոնողական և խնդրահարույց մոտեցումներ,

.նախագծի շուրջ աշխատանքի ընթացքում ուշադրության կենտրոնում է միտքը,իսկ լեզուն կատարում է իր հիմնական գործառույթը՝ այդ մտքեր ձևակերպումը,

.հնարավորություն է ընձեռնում սովորեցնելու երեխաներին իրենց գործունեության միջոցով գիտելիքներ ստանալ:

Նախագծի մեթոդի օգնությամբ հնարավոր է ուսուցանել ,թե ինչպես՝

.բացահայտել խնդիրները,

.անցկացնել դրանց վերլուծությունը,

.որոնել դրանց լուծման ուղիները,

.աշխատել տեղեկատվության վրա,

.գտնել անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրը,

.ստացված տեղեկատվությունը կիրառել առաջադրված խնդիրների լուծման նպատակով:

3.Տարրական դասարաններում նախագծային գործունեության կազմակերպման առանձնահատկությունները

Վերը շարադրվածն կարող է ամբողջությամբ վերաբերել տարրական դասարաններին:Իհարկե,տարիքն ստիպում է կատարել որոշակի սահմանափակումներ սովորողների նախագծային գործունեության կազմակերպման հարցում,այնուամենայնիվ ,անհրաժեշտ է կրտսեր դպրոցականներին ներառել նախագծային գործունեության մեջ ,քանի որ հենց կրտսեր տարիքում են ձևավորվում մի շարք կարողություններ ,անձնային շատ որակներ:Եթե այդ հանգամանքը հաշվի չի առնվում ,եթե անտեսվում են այս տարիքի առանձնահատկությունները,ապա խախտվում է սովորողների ուսումնաճանաչողական գործունեության փուլերի հաջորդականությունը:

Տարրական դպրոցում նախագծային գործունեության կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանաֆիզոլոգիական ունակությունները:

Մանկական նախագծային աշխատանքի թեմաները նպատակահարմար է ընտրել ուսումնական առարկաների բովանդակությունից կամ մոտ բնագավառներից,քանի որ նախագծի համար պահանջվում է անհատական կամ հասարակական նշանակության խնդիր,որը ծանոթ է կրտսեր դպրոցականներին,որոնց կարող են հանդիպել տարրական դպրոցի սովորողները:

Անհրաժեշտ է նաև աշակերտների հետ միասին առաջադրել ուսումնական նպատակներ: Օրինակ՝ կարելի է երեխաներին առաջադրել այնպիսի հարցադրումներ.ի՞նչ կարողություններ են անհրաժեշտ նախագծի կատարման համար,դուք բավարար չափով ունե՞ք արդյոք այդ կարողությունները,ի՞նչ ձևով կարող եք ձեռք բերել ձեզ անհրաժեշտ կարողությունները ,ուրիշ որտե՞ղ հետագայում դուք կարող եք կիրառել այդ կարողությունները:

ՈՒսուցչից մեծ ուշադրություն է պահանջում նաև հետազոտության իմաստավորման ընթացքը,որը նպատակաուղղվում է սովորողների գիտելիքների ձեռքբերմանն ու կիրառմանը,ինչն անհրաժեշտ է այս կամ այն նախագծի իրականացման ընթացքում:

Նախագծի շուրջ աշխատանքի ընթացքում նպատակահարմար է կրտսեր դպրոցականներին տանել էքսկուրսիա կամ զբոսանքի :

Ինչպես կազմակերպել և անցկացնել նախագծի մեթոդը տարրական դասարաններում

Ցանակցած գործունեության(այդ թվում նաև նախագծային) իրականացում ակխված է դրա ճիշտ կազմակերպումից:Այստեեղ կարևոր է «եռամիասնության» կանոնը,այսինքն ՝ ուսուցչի,աշակերտի,ծնողի համագործակցությունը:Խմբում ուսուցիչն ուղղորդողը,շտկողը,խորհրդատուն,ինչպես նաև ոգևորողն է:Աշակերտն ու ծնողը գործում են միասնաբար,որտեղ երեխան գաղափարի կրողն է ,իսկ ծնողն օգնում է նրան գտնելու անհրաժեշտ տեղեկատվությունը և իրականացնելու գաղափարները:

Ինչպես մշակել նախագիծը

Ուսուցիչն ստեղծում է այնպիսի խնդրահարույց իրավիճակ,որ աշակերտներին թվում է,թե այդ խնդիրը իրենց մտահոգում է,և իրենք ցանկանում են լուծել այն:Նախագիծը պարտադիր չե ,որ լինի շատ ծավալուն.կարևորն այն է,որ թեման լինի աշակերտներին հոգեհարազատ և հետաքրքրի նրանց:

Նախագծի նպատակը

Այն բանից հետո ,երբ առաջ քաշված խնդրահարույց հարցերի շարքից ընտրվում է առավել կարևորը, որոշվում է նախագծի նպատակը:Օրինակ,եթե ցանկություն է առաջացել դասարանում հավաքելու աշխարհի հրաշալիքների հավաքածուն ,կարող են առաջանալ մի շարք խնդրահարույց հարցեր.

.ճարտարապետական ի՞նչ կոթողների մանրակերտներ կարող ենք ստեղծել դպրոցի պայմաններում ,

.ի՞նչ նյութեր կարող ենք օգտագործել կոնկրետ որևէ մանրակերտի ստեղծման ընթացքում,

.ո՞ր նյութն է առավել հարմար տվյալ մոդելի ստեղծման համար և այլն:

Ընտրելոն առավել կարևորները ՝ կարելի է որոշել նախագծի նպատակը.օրինակ ՝ո՞ր նյութերն են առավել համապատասխան ճարտարապետական մանրակերտների ստեղծման համար:

Նախագծի խնդիրները

Խնդիրներ ,որոնք՝

.կապված են տեսական հարցերի հետ

.կապված են մոդելավորման և հետազոտական աշխատանքների հետ

.կապված են շնորհանդեսի հետ

Նախագծի մշակման ընթացքում ուսուցիչը ոչ միայն խնդիրներ է առաջադրում ,այլև դրանք քննարկում է երեխաների հետ:Շնորհանդեսի ժամանակ խնդիրներն անպայման ներկայացվում են:

Գիտական վարկածը

Վարկածն առաջ է քաշվում ՝ նպատակներից ելնելով:Վերադառնալով ճարտարապետական կոթողների մոդելավորմանը՝ կարելի է առաջ քաշել հետևյալ վարկածը.ենթադրենք ՝ ծեփոնն ամենաարդյունավետ նյութն է ,որը կարելի է օգտագործել դպրոցի պայմաններում:ՈՒսումնասիրելով նյութի հատկությունը ՝ կարելի է այս վարկածը հաստատել կամ ժխտել:

Աշխատանքի պլանավորումը

Նախագծի գործնական մշակումն սկսելուց առաջ երեխաներին պետք է ծանոթացնել հետազոտական մեթոդներին,որոնք նրանք պետք է կիրառեն նախագծի շուրջ աշխատանքի ընթացքում.

.ինքնուրույն մտածել,

.կարդալ գրքեր,

.հարցնել մեծերին,

.դիմել համակարգչի օգնությանը,

.դիտարկել,

.խորհրդակցել մասնագետի հետ,

.անցկացնել փորձաքննություն և այլն:

Ծնորհանդեսի ընթացքում ներկայացվում է հետազոտական մեթոդների և դրված խնդիրների կապը:

Կարևոր է նշել,որ եթե նախագծում մասնակցում են մի քանի երեխա,ապա այս փուլում յուրաքանչյուր ելույթ ունեցող անպայման պետք է պատմի իր ներդրած ավանդի մասին,այլ խոսքով՝ կարճ ներկայացնի իր ենթանախագիծը:

Նախագծերի շուրջ աշխատանքը բավականին բարդ է,այդ իսկ պատճառով անհրաժեշտ է տարրական դասարանների աշակերտներին դրան աստիճանաբար նախապատրաստել:Տարրական դասարանի աշակերտների հետ հաճախ է կիրառվում խաղ-հետազոտությունը,որը բաղկացած է երկու փուլից՝ մարզողական պարապունքներ և ինքնուրույն հետազոտություն:

ՈՒսուցչին անհրաժեշտ է կիրառել իր ողջ մանկավարժական և հոգեբանական կարողությունները,որպեսզի նախագծի շուրջ աշխատանքը հետաքրքրի աշակերտին

Նախագծի ինչ տիպեր է նպատակահարմար անցկացնել տարրական դասարաններում

Դասը,որն անցկացվում է նախագծի մեթոդով,կարող է լինել ինչպես նոր նյութի յուրացման,այնպես էլ ուսումնական խնդիրների լուծման կարողությունների ամրապնդման և մշակման դաս:

Գոյություն ունեն նախագծերի տիպերի դասակարգման տարբեր մոտեցումներ:

Ըստ գործունեության տեսակի

Կան մեթոդի տարատեսակներ:Տարբերում են հետազոտական,ստեղծագործական ,խաղային,տեղեկատվական և գործնական նախագծեր:Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրը.

.Հետազոտական նախագծերն ունեն ճշգրիտ մտածված կառուցվածք,որը համընկնում է իրական գիտական հետազոտության կառուցվածքին.թեմայի արդիականությունը,հետազոտության խնդիրը,առարկան և օբյեկտը,հետազոտության նպատակը,գիտական վարկածը,դրանցից բխող խնդիրները,հետազոտության մեթոդները,արդյունքների քննարկումը,եզրահանգումը ևերաշխավորությունները:Սա նախագծի առավել տարածված տեսակն է:

.Ստեղծագործական նախագծերը չունեն սովորողների միասնական գործունեության մանրամասն մշակված կառուցվածք և հետագայում զարգացվում են՝ վերջնական արդյունքի ձևի և ժանրի պահանջներինհամապատասխան:Դրանք կարող են լինել պատի թերթ,միջոցառման սցենար,տեսաֆիլմ,դպրոցական ժողովածու և այլն:

.Խաղային նախագծերը մեծ նախապատրաստական աշխատանք են պահանջում:Ընդունված որոշումներն իրականացվում են խաղային իրավիճակներում:Սովորողներն ստանձնում են որոշակի դերեր:Այդպիսի նախագծերի արդյունքները միայն գործողությունների ավարտից հետո են երևում:

.Տեղեկատվական նախագծերն ուղղված են ինչ-որ մի օբյեկտի ,երևույթի մասին տեղեկատվության հավաքմանը,այդ տեղեկատվության մշակմանը ,վերլուծությանը և փաստերի ամփոփմանը:

.Գործնական նախագծերը պահանջում են ճիշտ կերպով մտածված կառուցվածք,որը կարող է ներկայացված լինել սցենարի տեսքով ,որտեղ որոշված է յուրաքանչյուր մասնակցի գործառույթը և վերջնական արդյունքի ձևավորման մեջ յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը:Նպատակահարմար է անցկացնել փուլային քննարկումներ,որոնք հնարավորություն են տալիս համակարգելու սովորողների միասնական գործունեությունը:

Ըստ առարկայական-բովանդակային հատկանիշի.

.փոքր (իրականացվում է կոնկրետ դասավանդվող առարկայի նյութի հիման վրա),

.միջառարկայական (ընդգրկվում է մի քանի դասավանդվող առարկաների թեմատիկաներ):

Ըստ նախագծի մասնակիցների քանակի.

.անհատական,

.զույգերով,

.խմբային:

Ըստ նախագծի շարունակականության.

.կարճ ժամանակ պահանջող,

.երկար ժամանակ պահանջող:

ՈՒսումնական ծրագրի ինչ թեմաներ է նպատակահարմար ընտրել նախագծի համար

Ինչպես վերը նշվեց,նախագծի շուրջ աշխատանքը սկսվում է թեմայի ընտրությունից:

Ինչպես ընտրել նախագծի թեման:Նախագծի թեմա կարող է դառնալ ցանկացած առարկա ,երևույթ,իրավիճակ:Տարբերությունն այն է ,որ թեման կարող է ձևակերպել բազմազան ձևերով:Թեմայի ձևակերպման մեջ,կարող է ընդգրկվել.

.առարկան,

.հետազոտությունը,

.խնդիրը,

.լուծումը:

Առարկա

Ընտրում են ինչ-որ մի կոնկրետ հետաքրքրաշարժ առարկա,որը ծանոթ է երեխային:Դա կարելի է անել մտավոր գրոհի ,սովորական դիտարկուների կամ հետաքրքրությունների բացահայտման միջոցով:Սա թեմայի ընտրության ամենադյուրին միջոցն է:Բայց այսպիսի ձևակերպման մեջ չի երևում կոնկրետ աշխատանքի ուղղությունը:Այդ իսկ պատճառով սկսում ենք մտածել ,թե ինչ պետք է անենք այդ առարկայի հետ.ինչպես ճանաչել այն,փնտրել,մշակել,համակարգել տեղեկատվությունը ,ինչպես ներկայացնել արդյունքները:

Հետազոտություն

Ընտրում են առարկա,որն ուզում են ճանաչել որոշակի համատեքստում:Կարելի է կիրառել առավել վաղ հիշատակված մեթոդները ՝ լրացուցիչ հարցնելով՝«ի՞նչ ենք մենք ուզում իմանալ այդ առարկայի մասին»:Այդպիսի հարցերը ուղղորդում են ,թե ինչ հետազոտոկան աշխատանքներ պետք է կատարել.անհրաժեշտ է միայն պլանավորել և իրականացնել:

Աշխատանքն ունի հիմնականում ճանաչողական բնույթ:Օրինակ ՝ «Ընտանեկան ավանդույթները»,«Մեր դպրոցի պատմությունը»:

Խնդիր

Ընտրում են այնպիսի առարկա կամ իրավիճակ,որի հետ կապված է ինչ-որ խնդիր:

Այդ պատճառով կարելի է քննարկել ,թե ինչն է իրենց անհանգստացնում,ինչը կցանկանային ավելի լավացնել:

Կոնկրետ խնդիր ենթադրող թեմայի համար հաճախ անհրաժեշտ է սկզբնական մանրակրկիտ հետազոտություն ,որպեսզի հասկանալի լինի խնդրի էությունը:Դրանից հետո կատարվում է լուծման ուղիների մշակումն ու իրականացումը:

Լուծում

Ընտրում են կոնկրետ իրադարձություն ,աշխատանք ,որը ,մեր կարծիքով ,արժեքավոր է:Թեմայի ձևակերպումից հետո անմիջապես կարելի է անցնել գործողությունների պլանավորման `չխորանալով խնդրի հետազոտության մեջ:Այսպիսի աշխատանքը հիմնականում ունի կազմակերպական բնույթ:Կարևոր է,որ նախագծի սկզբում առաջադրվի խնդիրը,իսկ հետո որոշվի նախագծի թեման:Իսկ շնորհանդեսը կատարվում է այլ կերպ.սկզբում ներկայացվում է թեման,հետո` խնդիրը,որը պայմանավորված է այդ թեմայով:

Թեման պետք է ընտրվի ` հաշվի առնելով հետևյալ նպատակադրումները.

.Այն պետք է հետաքրքրի սովորողներին:

.Լինի համեմատաբար մատչելի,որպեսզի դրա իրագործումը շատ չերկարի ,և երեխայի հետաքրքրությունը չմարի:

.Աշխատանքի բովադակությունը պետք է օգտակար լինի թե՛ մասնակիցներին,թե՛ ունկնդիրներին:

.Լինի յուրահատուկ:

.Կրի ճանաչողական բնույթ:

.Անհրաժեշտ է հաշվի առնել տեղեկատվության աղբյուրները,այսինքն` անհրաժեշտ աղբյուրների առկայությունը և թեմայի շուրջ աշխատանքի նյութերը:

Թեմայի ճիշտ ընտրությունից է կախված աշխատանքի արդյունքը:

Կարելի է առանձնացնել թեմաների երեք խումբ.

.երևակայական,որոնք վերաբերում են ոչ իրական,երևակայական իրերին և երևույթներին,

.տեսական,որոնք նպատակաուղղված են տարբեր աղբյուրների փաաստերի,նյութերի ուսումնասիրմանն ու ամփոփմանը,

.փորձաքննական,որոնք ենթադրում են սեփական դիտարկումների և փորձերի անցկացում:

Խնդիրը կարող է առաջադրել աշակերտը,բայց կարող է ուղղորդվել ուսուցչի կողմից ,այսինքն՝ ուսուցիչը ստեղծում է այնպիսի իրավիճակ ,որը կարող է նպաստել աշակերտների հետաքրքրության առաջացմանը տվյալ խնդրի նկատմամբ:Ընդ որում ՝ խնդիրը պետք է դառնա երեխայի սեփականությունը,այսինքն՝ առաջադրվի իր կողմից:

Այսպիսով՝ ընտրելով նախագծի թեման ՝ ուսուցչին անհրաժեշտ է հիմնվել ամենից առաջ սովորողների հետաքրքրությունների շրջանակի վրա:Այսպես տարրական դասարաններուն անհրաժեշտ է անցկացնել հարցումներ՝ առաջարկելով երեխաներին առանձնացնել կամ ընդգծել երեք-չորս խնդիր,որոնք իրենց առավել հետաքրքրում են:Օրինակ՝ աշխատելով «Իմ դպրոցի պատմությունը» նախագծի շուրջ՝ կարելի է առաջարկել հետևյալ հարցաշարը.

1.Գիտե՞ս արդյոք քո դպրոցի խորհրդանիշները (զինանշան,դրոշ,հիմն):

2.Որտե՞ղ են սովորել քո ծնողները՝

3.Սովորե՞լ են արդյոք ձեր դպրոցում հանրաճանաչ մարդիկ:

4.Քո ուսուցիչներն արդյոք մասնակցե՞լ են տարբեր մրցույթների,գիտաժողովների և այլն:

5.Ի՞նչ հիշողություններ են թողնելու ,ի՞նչ ավանդ են ներդնելու աշակերտները,առանց որոնց հնարավոր չե այս դպրոցի գոյությունը:

Գործնական աշխատանք

Թեման՝ «Տեքստ,տեքստի խառնված հերթականության շտկում»

Գործնական աշխատանքի նպատակը

Աշակերտները՝

1.կսովորեն վերականգնել տեքստի մասերի հաջորդականությունը և կշարունակեն այն՝ հաշվի առնելով տեղի ունեցող գործողությունների ընթացքը,

2.կդրսևորեն կապակցված բանավոր և գրավոր ճիշտ խոսք կառուցելու կարողություններ,

3.ձեռք կբերեն ճշտված տեքստի վերաբերյալ վերլուծելու ,դատողություններ կատարելու կարողություններ:

Դասի ընթացքը

1.Սովորողներին առաջադրվում է որոշել տրված հասկացությունների հաջորդականության տրամաբանական ճիշտ շղթան,գրառել այն և հիմնավորել իրենց ընտրությունը:

Գրատախտակին գրված է.

բառ	վանկ	նախադասություն	տեքստ	հնչյուն

Սովորողները որոշում են ճիշտ հերթականությունը և գրում.

հնչյուն	վանկ	բառ	նախադասություն	տեքստ

2.Սովորողները հիշում են գծակարգում տեղադրված յուրաքանչյուր հասկացության սահմանումը և առանձնապես ավելի հիմնավոր կանգ են առնում «տեքստ» հասկացության վրա:Ուսուցիչն ինքը կարդում կամ առաջարկում է երեխաներին կարդալ իրար հետ կապ չունեցող նախադասությունների խումբ ,այնուհետև մոտավորապես նույն քանակի նախադասություններ ունեցող տեքստ,ապա առաջարկում է ասել ,թե ինչով էին տարբերվում նախադասությունների այս երկու խումբն իրարից:Ուսուցիչն օգնում է երեխաներին հասկանալու և սահմանելու,որ տեքստը ընդհանուր թեմայով,հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբն է:

3. Գրատախտակին փակցվում է ծաղկի պատկեր ,որի թերթիկների վրա գրում են տեքստի հատկանիշները և բացատրում,թե ինչ է նշանակում յուրաքանչյուր հատկանիշ:



1.Վերնագիր

2.Սկիզբ

3.Ընթացք

4.Հենակետային բառեր

5.Պարբերություն

6.Ավարտ

Աշակերտներին տրվում են որևէ տեքստի առանձին պարբերություններ `խառնված հերթականությամբ:ՈՒսուցիչն առաջարկում է տեքստի դրվագները դասավորել ճիշտ,տրամաբանական հերթականությամբ և սոսնձել աղյուսակ 1-ին համապատասխան սյունակներում:

ՈՒ՞ր գնային թռչունները: Հավաքվեցին ,մտածեցին ու երամներ կազմեցին:	Ձմեռ էր:Նա փչեց իր սառը քամին:Բոլոր ծառերից պոկեց տերևներն ու թափեց ճանապարհներին:Սկզբում որոշեց պատժել թռչուններին:
Երամներն,աղմկելով սարերի ու ծովերի վրայով,թռան տաք երկրներ:Մնաց միայն ճնճղուկը,այն էլ վախից ձայնը կտրեց:	Ձմեռը տեսավ,որ թռչուններին չի կարող հասնել,գնաց դաշտերն ու անտառները,հարձակվեց մյուս կենդանիների վրա:
Սկյուռը,ծառի փչակում նստած ,կաղին էր կրծում ,արջն իր որջում թաթն էր լիզում,նապաստակը ցատկոտում էր ու տաքանում:	Ձմեռը տեսավ,որ ոչինչ չի կարողանում անել,բարկությունից լաց եղավ:Լսվեց արցունքի կաթկթոցը: Գարունը մոտենում էր...

Դաշտերն ու անտառները ձմեռը ծածկեց ձյունով:Սկսեց բուք ու սառնամանիք տարածել:Սակայն կենդանիները չվախեցավ:

Աղյուսակ 1

1	2	3	4	5	6	7	8

Սովորողները ընթերցում են վերականգնված ամբողջական տեքստը և որոշում նկարագրվող դեպքերի հաջորդականությունը:

Սովորողներին առաջադրում է հորինել և գրել նոր դրվագներ՝ ըստ հետևյալ պլանի և որոշել այդ դրվագների տեղը աղյուսակում.

.Ձմեռը և ձկները

.Ձմեռը և մարդիկ:

Սովորողներին առաջադրում է վերագրել տեքստը:

Ինքնագնահատում ,ամփոփում

Ինքնագնահատում

Ինքնագնահատման նպատակով սովորողներին տրվում են թերթիկներ՝ տեքստի վերաբերյալ հարցադրումներով:Աշակերտները լրացնում են աղյուսակը:Եթե դատողությունը ճիշտ է ,դնում են«+»,իսկ սխալ է՝«-»:

Աշակերտի անուն,ազգանուն,հայրանուն _____

Հ.	Դատողություն	«+»կամ «-»
1.	Տեքստը կազմված է միմյանց հետ իմաստով կապված նախադասություններից:	
2.	Տեքստի նախադասությունները չունեն որոշակի հաջորդականությունը:	
3.	Տեքստում խոսվում է որևէ առարկայի մասին:	
4.	Տեքստը կարելի է բաժանել մասերի:	
5.	Տեքստն ունի վերնագիր և մասեր:	
6.	Վերնագրից կարելի է իմանալ,թե քանի մասից է կազմված տեքստը:	
7.	Տեքստի մասերը գրվում են հետևյալ հաջորդականությամբ.ընթացք,ավարտ,սկիզբ:	

Ամփոփել աշխատանքը և գնահատել:

Եզրակացություն

Տարրական կրթության ծրագիրը նպատակաուղղվում է կրթության բովանդակության սահմանման մեջ զգալի նշանակություն ունեցող ինքնուրույն գործունեության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես տարրական դպրոցում:Հայերենի դասընթացը ոչ միայն բուն լեզվական ,այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է:Հետևաբար՝ ընթերցանության նյութերը սովորողների լեզվաքերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների,լեզվական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին պետք է ապահովեն նաև մնության ,մարդու և հասարակական կյանոի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդկին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում:

Չափորոշչային վերոնշյալ պահանջներից բխող հետևությունն այն է,որ այսօր անհրաժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր,որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները:Ստեղծագործական աշխատանքի ձևերից են նաև աշակերտների գործնական աշխատանքները:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները,որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների ,կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ ,ինչպիսիք են գիտելիքների որոնումը,դրանց իմաստավորումը,ամրապնդումը,կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը,գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը;

Ձեռնարկի նյութն ավելին է ,քան ուսուցիչը կարող է օգտագործել:Հեղինակները կարծում են ,որ դա հնարավորություն կընձեռի ուսուցչին ընտրություն կատարելու ոչ միայն աշխատանքների տեսակների միջև ,այլև միևնույն տեսակի աշխատանքներից ընտրելու և կազմակերպելու իր դասարանի նախասիրություններին համապատասխան նյութ:

Հայտնի է ,որ սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատման նոր համակարգի համաձայն՝ գործնական աշխատանքներ նախատեսվում են և՛ միավորային,և՛ ուսուցանող գնահատումների դեպքում :Հետևաբար՝ ձեռնարկում տեղ գտած նյութերը ուսուցիչը կարող է օգտագործել և՛ ստուգման,և՛ ուսուցանող նպատակներով:

Գրականության ցանկ

.Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ(1-9-րդ դասարաններ),Հայոց լեզու և գրականություն,2011:

.Մախչանյան Հ.,Ջրբաշյան Էդ.,Գրականագիտական բառարան ,Երևան ,Լույս, 1972:

.Միքայելյան Օ.,Միքայելյան Ս.,սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատումը,Ձեռնարկ ուսուցչի համար,2011:

.Թորոսյան Կ.,Թերեզյան Գ., Խաչատրյան Հ., Խոսք և հաղորդակցում ,Ձեռնարկ ուսուցչի համար,երևան ,2011:

.Աստվածատրյան Մ.Արնաուդյան Ա. և ուրիշներ,Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը,Ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար,ԱՅՌԵՔՍ,Երևան ,2008: